

որպէս թէ զթողութիւն խնդրեցէ մեղաց : Ար թէպէտ և մերս պատմութեանց իցեն բանք , սակայն թագաւորն ոչ վրիպի 'ի խնդրեալ պարգևացն՝ յուսացեալ առ հանդերձեալ հատուցմունսն :

Դարձեալ և 'ի հարաւակողմ կուսէ խորանին 'ի վերայ դրան եկեղեցւոյն յօրինեալ է տեղի գահոյից , 'ի բարձանց 'ի խոնարհ կամարաձև աստիճանօք զէջսն ունելով , որպէս զի իցէ տեղի աղօթից թագաւորին զուսպ և զերծ 'ի մարդկանէ , որով 'ի միտս իւր եկեալ անզբաղապէս ընդ Բստուծոյ խօսեսցի :

Իսկ 'ի ներքուստ կողմանէ զսրբութիւն սրբութեանցն հրաշալիս իմն յօրինէ նկարապաճոյճ դեղովք , դրամբք արծաթապատօք և լի ոսկեհուն զարդիւք , ոսկեպատ պատկերօք , և աւամբք պատուականօք , և մարգարտահիւս զարդիւք , և պէսպէս երևելի և պայծառ սպասիւք , զոր հրաշափառապէս եցոյց մեզ երկրորդ Արուսաղէմ , միանգամայն և դուռն վերին Երուսաղէմ :

Բտանօր կատարին մարգարէութեն նուագք , թէ ուրախ լեր անապատ ծառաւի . և դարձեալ եթէ՝ ցնծասցէ երկիր , և ուրախ եղիցին կղզիք բազումք : Արդարեւ սա էր երբեմն անապատ ծառաւի . իսկ այժմ քաղաք մեծին Բստուծոյ գետահետեալ յերկուց մշտաբուղիս ազբերաց , 'ի սրբոյ աւազանէն , և յանապական արեւնէ Արդւոյն Բստուծոյ , արբուցանէ զոգւով ծարաւիս :

Իսկ զօր նաւակատեաց սորա դասիւք եպիսկոպոսաց և իշխանաց չքեղացուցանելով տօն մեծ ուրախութեան կատարէ մեծապարծ պարծանօք յիշատակ ազգաց յազգս : ԲՏա ասացաք որ ինչ յաղաքս սրբոյ եկեղեցւոյն :

ԹՈՎԱԾ ԱՐԴՈՒԹԻՒՆ

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Քանի մը ազգաց կերակուր ուտելու կերպր :

Հետաքրքրական նիւթ մը կը համարինք քանի մը այլ և այլ ժողովուրդներու ու ազգաց կերակուր ուտելու կերպին վրայ համառօտ ծանօթութիւն մը տալ հոս մեր բանասիրաց , ցուցնելու համար թէ նաև այսպիսի պարզ նիւթի մը մէջ որչափ հեռու են ճշմարիտ բարեկրթութենէ :

Մալտիվեան կղզեաց բնակիչները կերակուրնին առանձին առանձին կ'ուտեն . կը քաշուին տանը ամենաճածուկ տեղուանքը , կը քաշեն պատուհանաց կտաւները , զոր իրենք փեղկի տեղ կը գործածեն , որպէս զի առանց տեսնուելու կարենան ուտել : Ենչուշտ բարբառօտութեան և մարդկային ընկերութեան նախնի ժամանակներէն առաջ եկած է ինքզինքը ծածկելու կերակուրի ժամանակ , վախճալով որ ուրիշ քաղցած զօրաւոր մարդ մը չգայ չյափշտակէ ձեռքէն իր ուտելիքը : Ախարդութեան վրայ ալ սաստիկ հաւատք ունենալով բարբարօսք՝ կը դողան որ չըլլայ թէ մէկը դիւթէ իրենց կերակուրը :

Մալտիվացւոց առանձնական կերակուր ուտելուն ուրիշ պատճառ մ'ալ կայ : Երբ չեն ախորժիր սեղանի նըստիլ՝ իրենցմէ թէ տարիքով , թէ ընչիւք և թէ պատուով նուաստագունի մը հետ : Եւ որովհետեւ անհնարին է այսպիսի հաւասարութիւն մը հաստատելը , դատապարտուած են այս անընկերական կենաց :

Երբ հակառակ Փիլիպպեան կղզիներուն բնակիչքը շատ ընկերասէր են : Արբոր անոնցմէ մէկը ընկեր մը չունի որ կարենայ բաժանորդ ըլլալ իր կերակրոյն , կ'երթայ կը փնտրուէ ինչուան որ գտնէ . որչափ ալ անօթութիւնը զինքը նեղէ , պէտք է որ առանց հիւր մը գտնելու բան չուտէ :

Ղինացի մեծատանց սեղանը զարդարուած է յախճապակով , գեղեցկա-

Հիւս մետաքսէ կապերտներ ալ վրան սփռուած . բայց դժալ, դանակ ու պատառաքաղ չեն գործածեր, հապա աժէն հրաւիրեալ ունի երկու փղոսկրեայ կամ եթենոսէ՝ մանր գաւազաններ, զորոնք դիւրութեամբ կը գործածեն պատառաքաղի տեղ :

() Դդենդայիք, որ բնութեամբ ընկերասէր են և հանդարտ իրենց կերպերուն մէջ, առանձին կ'ուտեն . կերակուրի ժամը գալուն պէս՝ ընտանիք կը բաժնուին մէկմէկէ, եղբարք, քորք, նաեւ այր և կին, ծնողք և զաւակք . ամենքն ալ ունին իրենց առանձին զամբիւղը . և մէկ քանի կանգուն մէկմէկէ հեռու նստած և մէկմէկու կոնակ դարձուցած՝ խոր լուութեամբ կ'ուտեն : Ըստ վայրենի ազգաց մէջ բաց 'ի կերակրոյ ժամէն՝ առանձին որոշեալ ժամ ալ կայ խմելու . այս սովորութիւնս 'ի սկզբան հարկը ստիպելէն էր, վասն զի պէտք կ'ըլլար հեռու աղբիւրի մը երթալ խմելու համար . ետքը սովորութիւն դարձաւ՝ նաեւ աղբիւրին մօտ եղած ատենն ալ :

Ուր որ վայելութիւնն ու քաղաքավարութիւնը մտած չէ, ով որ բարեկամ մը կը հրաւիրէ կերակրոյ՝ չգիտեր թէ ինչպէս ցուցնէ անոր իր յարգութիւնը, կամ ինչպէս զուարճացնէ զանիկայ : Վերիկայի Հնգիկներէն շատը շարունակ իրենց հրաւիրածները կը գրգռեն ուտելու, թէպէտ իրենք բանի մըն ալ չեն դաչիր : Եւր Վաղղիոյ մէջ հիւրընկալը միակերպ կ'երգէ, որպէս զի զուարճացնէ կերակուր ուտողաց խումբը :

Արշափ որ քաղաքականութիւնը տեղոյ մը մէջ առաջ կ'երթայ, մարդիկ կը փափաքին ցուցնելու իրենց վստահութիւնը բարեկամաց, և իբրեւ ազգականաց հետ կը վարուին անոնց հետ ալ : Իսկ Չինաց մէջ կ'ըսուի որ տանուտէրը կը հեռանայ հիւրերէն՝ իր քաղաքավարութիւնը ցուցնելու համար . անոնք ալ անշփոթ ուրախութեամբ կը

վայելեն անոր սեղանը : Ղապիսի անկիրթ ազգերը բարեկամութեան ալ նշանը անշնորհք կերպերով կը ցուցնեն . ինչպէս թաթարները բարեկամին ականջէն կը քաշեն զինքը խմելու ստիպելու համար, և կը չարչարեն ինչուան որ բերանը բանայ . բերանը բանալուն պէս՝ ծափ զարնելով կը սկսին պարել անոր առջև : Իսկ Վամպատացոց բարեկամ ստանալու սովորութեանը պէս ծաղրական բան չկայ . նախ և առաջ կերակուրի կը հրաւիրեն, և հիւրը ու հիւրընկալը կը մերկանան չափէ դուրս տաքցուցած խցկի մը մէջ . հրաւիրեալը պէտք է համբերէ տաքին, ինչպէս նաեւ պէտք է ուտէ որչափ որ կերակուր դիմացը դրած են : Տասն անգամ կը փսիսէ յանձն առնելէն առաջ . բայց վերջապէս ինքզինքը յաղթեալ խոստովանելով՝ կը սկսին գործողութիւննին փոխել : Վիչ մը հանգչելու համար՝ շուներ և զգեստներ ընծայ կուտայ . վասն զի մէկ կողմէն հիւրընկալը կը սպառնայ տաքութիւնը աւելցնելու, և ուտել տալու ինչուան որ մեռնի : () Ետքը իրաւունք ունի՝ ինքն ալ իր կողմանէ հրաւերքը փոխադարձ ընելու . նոյն կերպով կը վարուի և նոյն պարգևները ինքն ալ կը պահանջէ : Արբոր առջի հրաւիրողը, որ ասանկ գեղեցիկ կերպով զուարճացուց զինքը, չընդունի անոր հրաւերքը, այն ատեն օտարը տէր կ'ըլլայ խցկին, ինչուան որ այն ընծաները՝ զորոնք միւսը այնպիսի արտաքոյ կարգի կերպով ընդունեցաւ՝ իրեն դաւնան :

Ղապ անկիրթ սովորութեան հետաքրքրական պատճառ մը կայ, և է բարեկամ ըլլալու անձին վարմունքը փորձելը : Վամպատացին որ կրակին և կերակրոյն ծախքը կ'ընէ՝ կը փափաքի գիտնալու թէ օտարականը բաւական ջօրաւոր է իրեն հետ կրելու իր վիշտերը, և կամ թէ կը հաճի իրեն ընչից բաժանակից ըլլալու : Արբոր հիւրը ուտելու զբաղած է, ինքը շարունակ աւելի կը տաքցնէ խուցը, և իբրեւ յետին փորձ մը օտարին հաստատութեանն

ու սիրոյն՝ զգեստ և շուն կը պահանջէ :
Հիւրընկալն ալ նոյն փորձերը կը կրէ
օտարին խցկին մէջ և ինքն ալ իր կար-
գին կը ցուցնէ թէ որչափ ուժով կրնայ
իր բարեկամը պաշտպանել : Լմենէն
աւելի նորօրինակ սովորութիւնն ալ
կրնայ պարզ երևնալ փիլիսոփայի մը ,
եթէ կարենայ զանոնք տեսնել իրենց
տեղերը :

Լրտարացի սեւագէմք իբր մեծ նշան
մը իրենց մէկուն վրայ ունեցած յարգա-
նացը՝ մէկ ամանէ կը խմեն անոր հետ
նոյն ժամանակին մէջ : Լուսնկոյի թա-
գաւորը՝ մէկ խուցի մը մէջ կ'ուտէ , ու
րիշ խուցի մը մէջ ալ կը խմէ : Վամշա-
տացիք իրենց հիւրին դիմացը ծունկ չո-
գած՝ ծովային հորթու մսէն մեծ կտոր
մը բռնի կը մղեն անոր բերանը , բար-
ձրաձայն կանչելով՝ Բանա Բանա (հոն
հոն) , և անոր բերնէն կախուած կտոր-
ները կտրելով իրենք կը կլեն :

Վաղղիոյ հին թագաւորաց հանգէս-
ներուն մէջ ալ բարբարոսական ճոխու-
թիւն մը կը տիրէր . պսակուելէն կամ
օծուելէն վերջը երբ սեղանի կը նըս-
տէին , ազնուականք ձիու վրայ հեծած
կը ծառայէին անոնց :

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Հարկեմայ ծովը Հոլանտացոց ցամաքեցի-
նկր :

Հոլանտացիք , որ ճարտարութեան
ու վաճառականութեան մէջ անուանի
են , գովելի ազահութիւն մը կը ցուցը-
նեն իրենց պզտիկ երկրին վրայ . և այն-
չափ աւելի սաստիկ է իրենց ազահու-
թիւնը , որովհետեւ ծովը իրենց երկրին
մակերեւութէն վեր բարձրացած է :

Հոլանտա միշտ ճախնային աշխարհք
մը եղած է . բայց քրիստոնէութեան
դարը սկսելէն ետքը ուղիւստօր սկսաւ
անոր փոխանորդութեան հողը ուտել ու
տանիլ : Եթեոք Սէօիւտերսէէ ծովա-
ծոցը չկար , ու այս ծոցին հարաւային
մասը կղզիացեալ լիճ մը կը ձևացնէր ,

որուն հոռմայեցիք Փէ-էան լիճ կ'ը-
սէին , և որն որ պզտիկ գետակով մը
միայն հիւսիսային ծովուն հետ կը
միանար : 1225 տարւոյն՝ ծովը Վադա-
ւիոյ բոլոր հիւսիսային ափունքներուն
թումբերը խորտակելով՝ Լան գետին
բերնէն ինչուան Փլեւեան լիճը , երե-
սուն փարսախէ աւելի տեղ գրաւեց , ու
Փլեւեան լիճն հետ միանալով՝ Սէօիւ-
տերսէէ ծոցը ձևացուց : Եւս ողողու-
մէն զատ՝ ուրիշ ողողումներ ալ եղան
Հոլանտայի մէջ , որոնք մեծամեծ փնաւ-
ներ հասուցին . ասանկով Լմնդերտամ ,
Հարլէմ ու Էյտ քաղաքներուն մէջ
տեղի եղած բոլոր երկիրը ջրով ծած-
կուեցաւ , ու պզտիկ ծոց մը ձևացաւ ,
որ Հարլէմի ծով կ'ըսուէր՝ իր ջուրերուն
աղի ըլլալուն պատճառաւ . երկայնու-
թիւնն էր 25 հազարամեդր ու լայնու-
թիւնը 11 հազարամեդր : Հարաւային
կողմէն հին հաւնոսին հետ կը հաղոր-
դակցէր , ու հիւսիսային արեւելեան
կողմէն ալ Սէօիւտերսէէի հետ Եւս
ծոցով . այս ճամբուն մէջտեղը ամբար-
տակ մը շինուած էր , որ Լմնդերտամի
ու Հարլէմի մէջ նաւարկութիւնը կ'ար-
գիլէր , ու կ'ըսէն թէ աշխարհքիս գե-
ղեցկագոյն ամբարտակն էր :

Տեսնալով Հոլանտացիք թէ իրենց
երկիրը միշտ վտանգի մէջ է ծովուն
յորդութիւններէն , մտածեցին որ բո-
լոր իրենց փոխանորդութեան երկայնութիւնը
ամբարտակներ շինեն : Երբոր այս հը-
նարքով ջրի վտանգներէն խալըսեցան ,
ուզեցին որ ծովէն գրաւուած երկիրնե-
րուն մէկ մասը ետ դարձնեն ու ցամաք
ընեն : Եկէն Հարլէմի ծովը , որն որ
աւանդութեամբ կ'ըսուէր թէ ատենօք
հարուստ , մշակուած ու բարգաւաճ
տեղ մըն էր , ամենուն աչքը իրեն ձգեց .
կը փափաքէին Հոլանտացիք որ ցամաք-
ցնեն զանիկայ : Հոլանտացի Հրեայք
յանձն առին որ իրենք այս բանիս ծախ-
քը կ'ընեն , թէ որ երկիրը իրենց տը-
րուելու ըլլայ . բայց շատ պատճառնե-
րու համար Հոլանտացիք այս շնորհքը
չըրին իրենց . այս պատճառներուն գըլ-
խաւորը այն էր , որ չըլլայ թէ Հարլէմի